

ԱՍՏՈՒԱԾՄԻՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Մենք Աստուածատր հայրերու գաւակներն ենք: Այսօր, սակայն մենք որքանով կը սիրենք զԱստուած եւ արդեօ՞ք կը սիրենք: Եթէ կը սիրենք՝ ինչո՞վ եւ ինչպէ՞ս կ'արտայայտենք մեր սէրը: Խօսքով, թէ՞ գործնապէս: «Մենք Աստուածատր ենք» խօսքը անկենդան լոգուք մը կը մնայ, եթէ երբեք մեր աստուածսիրութիւնը իր գործնական արտայայտութիւնը չգտնէ մեր կեանքին մէջ: Շատեր կան, որոնք կը խորհին, թէ Աստուածատր են եւ սակայն օրուան մէջ երկու վայրկեան աղօթքով ժամանակ չեն անցներ իրենց սիրած Աստուծոյն հետ, չեն կարդար իրենց սիրած Աստուծոյն խօսքը, չեն աղօթեր անոր տան՝ եկեղեցիին նորոգութեան հօրացման համար: «Փառքի ու պատիւի արժանի է Տէրը» կ'ըսեն, բայց չեն փառաբաներ ու չեն պատուեր զայն: Խօսքով կը մեծարեն, իսկ գործով կը զգետնեն անոր անունը: «Սուրբ ու բարի՛ է անոր կեանքը» կ'ըսեն, բայց չեն կատարեր զայն: «Մեղրէն աւելի քաղցր են անոր պատուիրանները» կը յայտարարեն, բայց ոչ մէկ ճիգ կը թափեն գործադրելու զանոնք: Եւ այդպիսիները կը մոռնան Տիրոջ խօսքը. «Եթէ կը սիրէք զիս՝ պիտի գործադրէք իմ պատուիրաններս» (Յհ. 14.15,21,23): Այսօրուան հաւատացեալը պէտք է վերանորոգէ իր սէրը Քրիստոսի հանդէպ: Պէտք է սիրէ Քրիստոսը. «Ինչպէս մարտիրոս մը, որ իր սէրը կը վերապահէ անոր՝ որ իր ամուսինը պիտի ըլլայ» (Բ.Կր. 11.2): Պէտք է զայն սիրէ անմար սիրով (Եփ. 6.24): Եւ այս սէրը մեր մէջ դնողը Սուրբ Հոգին ինքն է (Հռ. 5.5):

ՀԵՐԱՀԱՏՈՒԹԻՒՆ



Մեր ժողովուրդի ուխտի արտայայտութիւններէն մին եղած է նաեւ, մանչ գաւակի ծնունդէն ետք երեք, հինգ, կամ եօթը տարիներ անոր մազը երկարելը: Անցեալին յանախակիօրէն կը հանդիպէինք երկար մազերով դեռատի մանչերու, որոնք ուխտի գաւակներ էին: Եկեղեցին իր ծիսարան Մաշտոցին մէջ մասնաւոր Կանոն սահմանած է հերահատութեան համար: Երբ ճշդուած ուխտի ժամանակաշրջանը կ'աւարտէր, պատանին եկեղեցի կը բերէին եւ Կանոնը կը կատարէր: Քահանայ հայրը կարդալէ ետք կանոնական Աւետարանն ու աղօթքը, մկրատով խաչածնէ կը կտրէր պատանին մազերը ըսելով. «(Այս անուն) ծառային մազերը կը կտրուին՝ Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով»: Ապա պատանին ստանալէ ետք քահանայ հօր օրհնութիւնը, ծնողքը սափրիչի կը տանէր զինք եւ մազերը կտրելու տար:



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022 ԹԻՒ 42

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Ես. 20.2-21.6: Գղ. 4.3-18: Ղկ. 4.14-24

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 4.14-24

Յիսուս Գալիլիա վերադարձաւ Սուրբ Հոգիին զօրութեամբ եւ ամբողջ գաւառին մէջ իր համբաւը տարածուեցաւ: Անոնց ժողովարաններուն մէջ կ'ուսուցանէր՝ արժանանալով բոլորին հիացումին եւ գովասանքին:

Եկաւ Նազարէթ քաղաքը, ուր մեծցած էր եւ իր սովորութեան համաձայն Շաբաթ օրը ժողովարան գնաց: Երբ ոտքի ելաւ կարդալու օրուան ընթերցումը, իրեն տուին Եսայի Մարգարէին գիրքը: Բացաւ եւ գտաւ այն տեղը, ուր կ'ըսէր. «Տիրոջ Հոգին վրաս է, որովհետեւ օծեց զիս եւ դրկեց՝ աղքատներուն փրկութեան աւետիս տալու, սրտաբեկները մխիթարելու, աւետելու՝ թէ գերիները պիտի ազատագրուին, կոյրերուն աչքերը պիտի բացուին, հարստահարուածները պիտի ազատին եւ յայտարարելու, թէ ահա հասած է ժամանակը երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը»:

Այս գիրքը զոցեց, տուաւ պաշտօնեային եւ նստաւ: Ժողովարանին մէջ գտնուողներուն բոլորին աչքերը իրեն սեւեռած էին, երբ ըսաւ. «Այս մարգարէութիւնը, որ դուք լսեցիք՝ ահա այսօր իրականացաւ»: Ամէնքն ալ տպաւորուած էին իրմէ եւ հիանալով անոր շնորհալի խօսքերուն վրայ, կ'ըսէին. «Այս մարդը Յովսէփի որդին չէ՞»:

Յիսուս ըսաւ. «Անտարակոյս ինձի պիտի ըսէք հետեւեալ առաժը. Բժիշկ, դուն քեզ բժշկէ՛: Եւ պիտի ըսէք. Ինչ որ լսեցինք, թէ գործեր եւ Կափառնաւումի մէջ, այստեղ՝ քու քաղաքիդ մէջ ալ կատարէ՛»: Եւ անելցուց. «Բայց դուք ալ գիտէք, որ մարգարէն իր ծննդավայրին մէջ յարգ չունի»:

ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Տէ՛ր, մօտդ կանչէ՛ մեղանչած անձս, որովհետեւ չեմ համարձակիր մերծեցալ քեզի, կը պատկառիմ ամօթէն եւ կը զարհուրիմ իմ գործերէս: Համարձակութիւն չունիմ Քու առջեւդ, որովհետեւ ինքզինքս կորուստի մատնած եմ: Հեռացայ Քու սուրբ պատուիրաններէդ եւ մերկացայ Քու փառքէդ, բայց Դո՛ւն, Տէ՛ր, գթա՛ եւ ողորմէ՛ ինձի, որովհետեւ Քու անարատ ձեռքերուդ ստեղծածն եմ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ ԱՄԵՏԱՐԱՆՉԱՅՍ՝ ՄԱՏԹԵՆՍԻ, ՄԱՐԿՈՍԻ, ՂՈՒԿԱՍՈՒ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Մատթեոս Աւետարանիչ

Մատթեոս առաքեալ պաշտօնով մաքսաւոր, աշակերտներուն մէջ կը ներկայացնէ հրէական ժողովուրդի այլ դասակարգ մը: Մաքսաւորները հրէական ընկերութեան մէջ հաշտ աչքով չէին դիտուեր: Անոնք Հոռմէական կայսրութեան պաշտօնեաներ էին եւ ժողովուրդին վրայ դրուած տուրքերը կը հաւաքէին, եւ աւելին, շահագործելով իրենց պաշտօնը աւելիով կը գանձէին ժողովուրդէն:

Մատթեոս առաքեալ նաեւ կոչուած է Ղեւի (Մր. 2.14): Ան իր անունը կրող աւետարանով, ուր բազմաթիւ մէքեքումներ կը կատարէ Հին Կտակարանի գիրքերէն, կը փորձէ հրեայ ժողովուրդին փաստել, թէ սպասուած Մեսիան՝ Յիսուս Ինք է:

Կ'ըսուի, թէ Մատթեոս քարոզած է Եթովպիոյ կամ Պարսկաստանի մէջ, ուր եւ նահատակուած է:

Մարկոս Աւետարանիչ

Մարկոսի գրած Աւետարանը, բաղ-դատմամբ միւս աւետարաններուն, համառօտ եւ կարն ու կարուկ ոճով գրուած Աւետարան մըն է: Ան հնագոյն աւետարանն է եւ ուղղուած է Հոռմի քրիստոնեաներուն, գրիստոս ներկայացնելով բարձր հեղինակութեան եւ իշխանութեան տէր անձ մը՝ Մարդու Որդին:

Մարկոս, որու հրէական անունը Յովհաննէս էր, ընկերակիցը կ'ըլլայ Պողոսի եւ Բառնաբայի, առաքելական առաջին նամակագրութեան ընթացքին եւ սակայն կէս ձգելով առաքելութիւնը կը վերադառնայ Երուսաղէմ: Ապա Բառնաբայի հետ կը մեկնի Կիպրոս եւ աւանդութիւնը կ'ըսէ, թէ ան կ'անցնի Եգիպտոս եւ կը հիմնէ Ադեֆասնոփիոյ եկեղեցին:

Մարկոս առաքեալի մայրը նոյնպէս կ'ըլլայ գործունեայ հաւատացեալ քրիստոնեայ մը, որուն տունը կը դառնայ քրիստոնեական արարողութիւններ կատարելու աղօթավայր մը:

Ղուկաս Աւետարանիչ

Ղուկաս Աւետարանի եւ Գործք Առաքելոց գիրքի բացայայտ հեղինակը եղած է նոյնինքն Ղուկաս առաքեալ, որ Պողոս Առաքեալի առաքելական նամակագրութեան ընթացքին ընկերակից եղած է անոր եւ աշխատած անոր հետ քրիստոնեութեան տարածման քարոզութեան մէջ:

Ղուկաս ուսումով եղած է բժիշկ եւ իր ունեցած իւրաքանչեւ գիտական ծանօթութեամբ, իր գրած գիրքերու մէջ նոյնիսկ կը յիշէ Քրիստոսի բժշկած հիւանդութիւններուն անունները եւ զանազան մանրամասնութիւնները, զորս չենք գրուած միւս աւետարաններուն մէջ: Ան աւետարանը գրի կ'առնէ բազմաթիւ ծանօթութիւններ քաղելով Քրիստոսի մասին, նոյնիսկ հարցուփորձելով Աստուածամայր կոյսը, որով կարելի պիտի ըլլայ արձանագրել Քրիստոս մանկութեան եւ պատանութեան շրջանին կատարուած դէպքերը: Ղուկասի Աւետարանը ուղղուած է բոլոր նորադարձ քրիստոնեաներուն:

Յովհաննէս Աւետարանիչ

Առաքեալներու դասին մէջ ամէնէն կրտսեր եւ ամէնէն երկար ապրող առաքեալն է Յովհաննէս, որ նաեւ ցանցուած է «Սիրելի Աշակերտ» անունով:

Յովհաննէս եւ իր եղբայրը՝ Յակոբոս, Քրիստոսի կողմէ կը կանչուին, երբ ձկնորսութեամբ կը զբաղէին: Ան Քրիստոսի եռամեայ առաքելութեան ընթացքին ամենասիրելի անձը կ'ըլլայ Տիրոջ եւ նոյնիսկ երբ մատնութեան ժամանակ միւս աշակերտները վախճալով կը լքեն գրիստոս եւ կը փախչին, Յովհաննէս կը հետեւի Անոր հասնելով մինչեւ Գողգոթա, ուր իր սիրոյն առ ի գնահատանք, Յիսուս Մարիամ Աստուածածին կոյսը կը յանձնէ Յովհաննէսի ինամբին եւ այդպիսով կ'աւանդէ իր հոգին:

Յովհաննէս առաքեալ նաեւ ծանօթ է իր անունը կրող սփանջելի աւետարանով՝ Աւետարան Ըստ Յովհաննու: Ան իր առաքելութիւնը կը շարունակէ Եփեսոսի մէջ եւ ապա աքսորեալ կը տարուի Պաթմոս կղզի, ուր կ'ունենայ իր յայտնութիւնները, որոնք ամփոփուած են Յայտնութիւն Յովհաննու գիրքին մէջ: Յովհաննէս առաքեալ բնական մահով կը մեռնի 95 տարեկանին, շուրջ 100 թուականին Քրիստոսի:

Հ ՈԳԵՒՈՐ ՂԱՏ ԳԱՍ

ՊԱՏՈՒՄԸ ՄԵՐ ԱՎՆԿԱԿԱՆՔԵՆ ԱՐԵՒՆ Կ'ԸՆԷ

Աստուած միշտ մեր ակնկալածէն աւելին կ'ընէ: Աբրահամ երբեք խորհած էր, որ ինք Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին գլուխը պիտի ըլլար: Խորհած էր, որ իր սերունդին միջոցաւ աշխարհի բոլոր սերունդները պիտի օրհնուէին: Խորհած էր, որ պիտի ըլլար հայրը բազմաթիւ ազգերու: Եգիպտոսի լուծին տակ տառապող Եբրայեցիներէն որո՞ւ մտքէն անցաւ, որ Աստուած զիրենք Եգիպտոսի ստրկութենէն պիտի ազատագրէր մեծամեծ նշաններով, իրենց դիմաց կարմիր ծովը պիտի ճեղքէր, զիրենք անապատներուն մէջ երկնապարգէտ հացով պիտի կերակրէր եւ Սինայի անապատին մէջ Տասնաբանեայ պատուիրանները պիտի տար:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ

Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Աստուած քու ակնկալածէն աւելի չըրա՞ւ: Դուն կ'ակնկալէի՞ր, որ Աստուած մարդեղանաբ, մտորի մը մէջ ծնէր, մարդոց միջեւ բնակէր, մարդոց ցաւերը փարատէր եւ ի վերջոյ, մարդոց պահանջքով ու մարդոց համար մեռնէր, հուսկ ապա յարութիւն առնելով՝ երկնքի ճամբան բացուած յայտարարէր:

Տիրոջ համար պիղծ է ամէն ամբարտաւան, ան ինչ ալ ընէ պիտի չարդարանայ: Արդար գործերը սկիզբն են բարի կեանքի մը եւ Աստուծոյ համար աւելի հաճելի է աղօթքը՝ քան զոհ մատուցանելը:

Առակ 15.5

ԵՐԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

ԵՐԷ ՍԻՐՏՎ ԱՏՈՒԾՈՅ ՀԱՆՎԷՊ ԵՐԱՏԱՏՎՈՒԹԵԱՄԲ ԼԵՅՈՒՆ Է ԵՒ Կ'ՈՒԶԵՍ ԶԻՆՔ ԳՈՒԱՐԸՆԵԼ, Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 40

Համբերութեամբ սպասեցի Տիրոջ, եւ ան եկաւ օգնութեան, լսեց իմ աղաչանքս: Զիս դուրս հանեց տառապանքի գուրէն ու ֆահիճէն, ժայռի վրայ կանգնեցուց, ամրապնդեց քայքայեալ շրթներուս վրայ դրաւ նոր երգ մը, օրհնութեան երգ՝ մեր Աստուծոյն: Շատեր պիտի տեսնեն եւ ահով լեցուին եւ Տիրոջ պիտի վստահին: Երանի՛ այն մարդուն, որ Տիրոջ կը վստահի եւ չի կոթնիր սուտ աստուածներուն, ո՛չ ալ անոնց՝ որոնք ստութեան կը հետեւին: Ի՛նչ հրաշալի են գործերը, որ ըրիր մեզի համար, Ո՛վ Տէր, Աստուածս, եւ քու ծրագիրներդ, որ մեզի համար պատրաստեցիր: Զկայ մէկը քեզի նման: Պիտի ուզէի հոչակել ու պատմել գանձքս, բայց ա՛յնքան շատ են ու անթիւ: Զոհ եւ ընծայ չկամեցար, ողջակէզ կամ մեղքի համար զոհ չպահանջեցիր, այլ՝ ականջներս բացիր, որ քեզ լսեմ: Եւ եւ ըսի. «Ահա կու գամ, ինչպէս գիրքի գալարին մէջ գրուած է ինձի համար: Ի՛նչքան կ'ուզեմ եւ քու կամքդ կատարել, ո՛վ Աստուած, օրէնքդ իմ սրտիս մէջ է: Քու ժողովուրդիդ հաւաքոյթին մէջ փրկութիւնդ աւետեցի եւ դուն գիտես, Տէ՛ր, թէ եւ բնաւ պիտի չդադրիմ զայն պատմելէ: Արդարութիւնդ սրտիս մէջ ծածկած չպահեցի, հաւատարմութեանդ եւ փրկութեանդ մասին խօսեցայ միշտ եւ ժողովուրդիդ հաւաքոյթին մէջ վկայեցի քու սիրոյդ եւ հաւատարմութեանդ մասին: Ուստի դուն, Տէ՛ր, գթութիւնդ մի զլանար ինձի: Քու սէրդ եւ ողորմութիւնդ թող տեւաբար պահապանեն զիս: ԱՄԷՆ

Շարունակել սաղմոսագիրքէն